ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

.... 2026 թվականի N .....-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում իրավաբանական օգնության տրամադրման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարության

2026 թվականի ....-ի N .....-Ն որոշման

ԿԱՐԳ

ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ սոցիալական ծառայություն տրամադրող) ու «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (այսուհետ՝ Հանրային պաշտպանի գրասենյակ) կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու հետ կապված իրավահարաբերությունները:

2. Իրավաբանական օգնությունը տրամադրվում է սոցիալական ծառայություն տրամադրողի իրավասության շրջանակներում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված այն անձանց կամ ընտանիքներին (այսուհետ՝ շահառու), որոնք դիմել են իրավաբանական օգնություն ստանալու համար:

3. Իրավաբանական օգնությունը տրամադրվում է քաղաքացիական,

ընտանեկան, աշխատանքային, վարչական, քրեական և այլ իրավահարաբերություններում առաջացող իրավական խնդիրների դեպքում՝ իրավաբանական օգնության կարիք ունեցող շահառուի իրավունքների և շահերի արդյունավետ պաշտպանության համար:

4. Իրավաբանական օգնությունը տրամադրվում է սոցիալական ծառայություն տրամադրողի՝ սույն կարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխանող իրավաբանի կողմից, ինչպես նաև «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով Հանրային պաշտպանի գրասենյակ ուղղորդելու միջոցով:

5. Իրավաբանական օգնությունը ներառում է՝

1) խորհրդատվություն՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի վարչական կամ դատավարական փաստաթղթերի կազմման վերաբերյալ, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում.

2) այլ աջակցություն՝ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, փաստաթղթերի վերականգնման կամ դրանց բացակայության դեպքում դրանց ձեռքբերման համար, ներառյալ՝ սոցիալական ծառայությունների տրամադրման ընթացքում անհրաժեշտ իրավական աջակցությունը:

6. Քրեական վարույթներով, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու համար դրա կարիքն ունեցող շահառուն սոցիալական ծառայություն տրամադրողի կողմից բանավոր, իսկ շահառուի ցանկության դեպքում՝ գրավոր ուղղորդվում է Հանրային պաշտպանի գրասենյակ, որտեղ շահառուին իրավաբանական օգնությունն անվճար տրամադրվում է «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված դեպքերում և կարգով:

7. Սոցիալական ծառայություն տրամադրողի կողմից իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել իրավաբանի բակալավրի կամ մագիստրոսի կամ որակավորված մասնագետի կրթություն, առնվազն երկու տարվա մասնագիտական փորձ ունեցող իրավաբանի կողմից:

8. Սույն կարգով նախատեսված իրավաբանական օգնություն ստանալու համար շահառուն ներկայացնում է գրավոր դիմում, եթե այլ կարգ

օրենսդրությամբ նախատեսված չէ:

9. Իրավաբանական օգնությունը տրամադրվում է անհատապես՝ գրավոր, բանավոր, հեռախոսով, էլեկտրոնային հասցեով կամ ցանկացած այլ եղանակով՝ օգնության տրամադրման եղանակը համաձայնեցնելով շահառուի հետ:

10. Սոցիալական ծառայություն տրամադրողի կողմից իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որում նշվում է տրամադրված իրավաբանական օգնության բնույթը, ծավալը և ուղղորդումները: Արձանագրությունը ստորագրում են իրավաբանը և սոցիալական ծառայություն ստացողը:

11. Իրավաբանական օգնություն տրամադրելու տևողությունը սահմանափակվում է կոնկրետ իրավաբանական խնդրի առանձնահատկություններով և սոցիալական ծառայություն տրամադրողի լիազորություններով, այդ թվում՝ նրա կանոնադրությամբ կամ պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում մատուցվող ծառայությունների տևողությամբ: